



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

<<28>> դեկտեմբերի 2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ No. 1917-1 Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս քննարկելով ֆիզիկական անձ Ռոման Մարտիկի Սիմոնյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐՉԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում իրավախախտում հայտնաբերելուց հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմված արձանագրության՝ ֆիզիկական անձ Ռոման Մարտիկի Սիմոնյանի (ՀՎՀՀ՝ 70996983, ՀԾՀ՝ 3408870425, հասցե՝ Տավուշի մարզ, գ. Կողբ, 22փ. 15/1տ.) չկատարված հարկային պարտավորությունը 09.04.2021 թվականի դրությամբ կազմել է 520.858 դրամ, որից ապառք՝ 498.420 դրամ, տույժ՝ 22.438 դրամ:

Վերոնշյալ պարտավորությունը գանձելու վերաբերյալ 23.07.2021 թվականին կայացվել է թիվ 1917-Ա որոշումը:

Օրենսգրքի 59-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝

Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք չեն համարվում ԱԱՀ վճարողներ, սակայն եթե նրանք Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծում ապրանքներ (այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ պետություններից), որոնց ներմուծումը, «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համարվում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում, կամ եթե մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք իրականացնում են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող՝ ապրանքների ներմուծման գործառնություններ, ապա պարտավոր են Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում հաշվարկել և պետական բյուջե վճարել այդ գործառնություններից առաջացող ԱԱՀ-ի գումարները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ չկատարված հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ թիվ 1917-Ա որոշումը կայացնելուց հետո ֆիզիկական անձի կողմից ներկայացվել է ներմուծման հարկային հայտարարագիր, ուստի առկա են բավարար հիմքեր հարկային վարչարարության ընթացքում իրավախախտում հայտնաբերելուց հետո հարկային մարմնի

պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմված արձանագրության հիման վրա կայացված թիվ 1917-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասով

ՈՐՈՇԵՑԻ

Ֆիզիկական անձ Ռոման Մարտիկի Սիմոնյանի վերաբերյալ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 23.07.2021 թվականին կայացված չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին թիվ 1917-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ



ԱՐՄԱՆ ՄԱՅԱԿԱՆՅԱՆ

Կատարող՝ ՀՀ ՊԵԿ ԻՎ ՀԳ ՊԿԱ բաժնի
տնօրենի մասնագետ Արմեն Գրիգորյան
հեռ. 011 549191 /91-38/



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵՎԱՍՏՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am